մասնակիցների ցուցակում ներառելու որոշումը վերացնելու պահանջի մասին, անհիմն է, ուստի այն պետք է մերժել:

Միաժամանակ, Դատարանը, անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հետևաբար, Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվոր կողմը նախապես վճարել է սահմանված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս լուծում է հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, գալիս է այն եզրահանգման, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.03.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ վճռի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետք է այն վերացնել:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 360-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը՝

ՎՃՌԵՑ

1. <<Էյչ Վի Էյ Սի Սերվիս>> ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի Պետական Համալսարան հիմնադրամի՝ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/87-3 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցման և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումը վերացնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.03.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը

պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն վերացնել:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ